



Հայաստանի առողջապահության նախարարության և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 4
ՀՀ ՀԱՐԿԱՑԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Քննաթերթ

<i>Հարցեր 1-15</i>	<i>15 միավոր</i>
<i>Խնդիր 1</i>	<i>30 միավոր</i>
<i>Խնդիր 2</i>	<i>25 միավոր</i>
<i>Խնդիր 3</i>	<i>15 միավոր</i>
<i>Խնդիր 4</i>	<i>15 միավոր</i>
<i>Ընդամենը</i>	<i>100 միավոր</i>

Հուլիս 2026թ.

Քննական հարցերին պատասխանելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի՝ 28.02.2026թ.-ի գործող խմբագրությամբ սահմանված նորմերով, հաշվի առնելով նաև դրա եզրափակիչ և անցումային մասով նախատեսված դրույթները:

Քննական հարցերում օգտագործվում են հետևյալ հապավումները.

<u>Հապավում</u>	<u>Նշանակություն</u>
Հայաստանի Հանրապետություն	ՀՀ
ՀՀ Հարկային Օրենսգիրք	ՀՕ
AMD	ՀՀ դրամ
hAMD	հազար ՀՀ դրամ

Պահանջվում է բոլոր խնդիրների պատասխաններում նշել կատարված հաշվարկներն ամբողջությամբ:

Հարցեր ՀՀ Հարկային օրենսգրքից (ՀՕ)

1. Ապրանքի ձեռքբերման փաստաթղթավորման նպատակով կիրառվում են հետևյալ հաշվարկային փաստաթղթերը .

- ա. հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը (այդ թվում՝ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնը),
- բ. լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտը,
- գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

2. Հարկային հաշվարկը կարող է ներկայացվել մինչև հաշվետու ժամանակաշրջանը ավարտվելը, եթե .

- ա. կազմակերպությունը գտնվում է լուծարման գործընթացում (կազմակերպության առանձնացված ստորաբաժանումը կամ հիմնարկը գտնվում է պետական հաշվառումից հանման գործընթացում),
- բ. նոտարը պաշտոնից ազատվում է,
- գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

3. Եթե ճշտված հարկային հաշվարկի ներկայացման արդյունքում առաջանում է հարկային պարտավորություն կամ ավելանում է նախկինում առաջացած հարկային պարտավորությունը .

- ա. ապա հարկ վճարողն ազատվում է հարկի գումարը պակաս ցույց տալու համար ՀՕ-ով սահմանված տուգանքի կիրառումից,
- բ. ապա հարկ վճարողն ազատվում է հարկի գումարը պակաս ցույց տալու համար ՀՕ-ով սահմանված տույժերի կիրառումից,
- գ. ապա հարկ վճարողն ազատվում է հարկի գումարը պակաս ցույց տալու համար ՀՕ-ով սահմանված տույժերի և տուգանքների կիրառումից:

1 միավոր

4. Շահութահարկ վճարողներ են համարվում .

- ա. ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունները,
- բ. անհատ ձեռնարկատերերը,
- գ. ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերը:

1 միավոր

5. Շահութահարկով հարկման բազան որոշելիս .

- ա. հարկային հսկողության արդյունքում հայտնաբերված՝ ակտիվների պակասորդի մասով կատարվում է հարկման բազայի պակասեցում,
- բ. հարկային հսկողության արդյունքում հայտնաբերված՝ ակտիվների պակասորդի մասով հարկման բազայի ավելացում կամ պակասեցում չի կատարվում,
- գ. հարկային հսկողության արդյունքում հայտնաբերված՝ ակտիվների պակասորդի մասով կատարվում է հարկման բազայի ավելացում:

1 միավոր

6. Ինչ^օ իմաստ ու նշանակություն ունի «տուգանք» հասկացությունը .

- ա. ՀՕ-ով կամ վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված պահանջները չկատարելու կամ խախտումներով կատարելու համար սահմանված պատասխանատվության միջոց,
- բ. հարկերը կամ վճարները ՀՕ-ով կամ վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված ժամկետներում չվճարելու կամ այդ ժամկետներից ուշ վճարելու համար ՀՕ-ով սահմանված պատասխանատվության միջոց.,
- գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

7. ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում հետևյալ գործարքը կամ գործառնությունը .

- ա. փոխառության տրամադրումը,
- բ. ֆինանսական ակտիվի օտարումը,
- գ. բեռների՝ ՀՀ տարածքից դուրս սկսվող և ավարտվող փոխադրման տրանսպորտային ծառայության մատուցումը:

1 միավոր

8. Տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը .

- ա. ներառվում է ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ,
- բ. չի ներառվում է ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ,
- գ. վերը նշված երկու պատասխանները սխալ են:

1 միավոր

9. Արտարժույթի առուվաճառքի գործարքների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում .

- ա. արտարժույթի վաճառքի և ձեռքբերման արժեքների բացասական տարբերությունը,
- բ. արտարժույթի վաճառքի և ձեռքբերման արժեքների դրական տարբերությունը,
- գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

10. Եկամտային հարկի հարկման բազան որոշելու նպատակով գանձապետական պարտատոմսերի գծով ստացվող տոկոսը .

- ա. համարվում է հարկվող եկամուտ,
- բ. համարվում է նվազեցվող (չհարկվող) եկամուտ,
- գ. չի համարվում է եկամտային հարկով հարկման օբյեկտ:

1 միավոր

11. Անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն.

ա. ձեռնարկատիրական եկամուտների մասով,

բ. պասիվ եկամուտների մասով,

գ. անձնական եկամուտների մասով:

1 միավոր

12. Շրջանառության հարկով հարկման օբյեկտ համարվող որ[՞] գործարքների հարկման բազայի նկատմամբ է շրջանառության հարկը հաշվարկվում 10 % դրույքաչափով.

ա. այլ ակտիվների, այդ թվում՝ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներ,

բ. արտադրական գործունեությունից ստացվող եկամուտներ,

գ. հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ:

1 միավոր

13. Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով 10% դրույքաչափով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված ծախսերի հանրագումարի որքան[՞] տոկոսը կազմող գումարի չափով է նվազեցվում.

ա. 3.5,

բ. 4.5,

գ. 9.5:

1 միավոր

14. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ կարող են համարվել.

ա. վարձակալական վճարի ստացում նախատեսող՝ գործող պայմանագրի՝ վարձակալական վճար ստացող կողմ հանդիսացող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը,

բ. անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք,

գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

15. Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են.

ա. շահութահարկի կանխավճարների կատարման պարտավորությունից,

բ. ՀՕ-ով սահմանված կարգով բնապահպանական հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից,

գ. անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից Օրենսգրքով սահմանված կարգով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից:

1 միավոր

Խնդիր 1. Շահութահարկի վերաբերյալ

Հարկման ընդհանուր համակարգում գործող ՀՀ ռեզիդենտ «Ալֆա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) կառուցում և վաճառում է բնակարաններ, ինպես նաև որպես կապալառու իրականացնում շինարարական աշխատանքներ:

Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգում 2025 թվականի (այսուհետ՝ հաշվետու տարի) համար առկա է հետևյալ տեղեկատվությունը (համարակալման մեջ *-ով նշված է եկամտի կամ նվազեցման հետ կապված լրացուցիչ տեղեկատվության կետերի համարները).

		hAMD
	Գործարքներ/Եկամուտներ	Գումարը
1*	Շինարարական աշխատանքներից հասույթ	685,220
2*	Բազմաբնակարան շենքից բնակարանների վաճառքից հասույթ	131,610
3	Բեռնատարի վաճառքից եկամուտ	2,920
4	Կատարված աշխատանքների դիմաց դեբիտորական պարտքերի մարումներ, որոնց գծով նախորդ տարում ՀՕ սահմանված կարգով կատարվել է պահուստավորում՝ համախառն եկամտից նվազեցում	2,320
5	Ոչ ռեզիդենտից ստացված կանխավճարի դուրս գրում	1,240
6	Այլ կազմակերպությունից անհատույց ստացված դրամական միջոց, որը բանկում ներդրվել է որպես ավանդ	1,230
7	Ներդրված ավանդից տոկոսային եկամուտ	220
8	Արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատման դրական արդյունք	340
9	Ֆինանսական լիզինգով ստացված սարքավորման գծով սուբսիդավորող տոկոս	3,850
	Ընդամենը եկամուտներ	828,950

		Գումարը
	Գործարքներ/Նվազեցումներ	Գումարը
1*3,1	Շինարարական աշխատանքների ինքնարժեք	520,210
2*4	Բազմաբնակարան շենքից վաճառված բնակարանների ինքնարժեք	93,890
3*5	Վաճառված բեռնատարի հաշվեկշռային արժեք	3,520
4	Պաշարների արժեզրկում	1,560
5*6	Վարչական ծախսեր	42,240
6*7	Իրացման և մարկետինգային ծախսեր	25,330
7*8	Ստացված վարկերի գծով հաշվարկված տոկոս	4,560
8	Արտարժույթի փոխարկումից ծախսեր	1,140
9	Ֆինանսական լիզինգով ստացված սարքավորման գծով տոկոս	5,250
	Ընդամենը նվազեցումներ	697,700

Լրացուցիչ տեղեկատվություն՝

1. Շինարարական աշխատանքներից հասույթում մասնավորապես ներառված է 31/12/2025թ.-ի դրությամբ 92,350 hAMD անավարտ պատվերի գծով կատարված ծախսումներին վերագրվող՝ 125,000 hAMD ակնկալվող հասույթի գումար: Անավարտ պատվերի գծով կատարված ծախսումները միաժամանակ ներառված են շինարարական աշխատանքների ինքնարժեքում:

2. Բազմաբնակարան շենքից հաշվետու տարում բնակարանների վաճառքից հասույթի վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը .

2.1. երկու հատ բնակարանների վաճառքի վերաբերյալ.

hAMD

Գնման իրավունքի պետական գրանցման պահին առկա տեղեկություններ			Բնակարանի վաճառքի պահին առկա տեղեկություններ			
Ամսաթիվ	Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով սահմանված կարգով հաշվարկված անշարժ գույքի հաշվարկային արժեքի 80 տոկոսը	Շուկայական իրական արժեքի 80 տոկոս	Ամսաթիվ	Վաճառքի գին առանց ԱԱՀ, նաև գնման իրավունքով պայմանագրի գին	ՀՕ հողվածով սահմանված կարգով որոշված՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոս	Շուկայական իրական արժեքի 80 տոկոս
09/02/2023	42,000	44,420	22/12/2025	37,150	46,430	49,860
06/03/2023	44,120	47,320	23/12/2025	45,980	45,380	52,620

Վաճառքի պահին բնակարանների որակական և քանակական բնութագրիչները չեն փոփոխվել տվյալ բնակարանների գնման իրավունքի պայմանագրերի հետ համեմատած:

2.2. 26/12/2025թ. -ին նոտարական պայմանագրով վաճառված բնակարանի 48,480 hAMD (առանց ԱԱՀ) արժեքը: Տվյալ բնակարանի վաճառքը պետական գրանցում ստացել է 12/01/2026թ. -ին:

3. Շինարարական աշխատանքների ինքնարժեքում մասնավորապես ներառվել են.

3.1. ՀՀ տարածքում մարտ ամսին աշխատակիցներին վճարված 3,450 hAMD գործուղման օրապահիկի գումարներ, ներառյալ մեկ աշխատակցին 10 օրվա համար տրամադրված՝ օրական 15 hAMD և մեկ այլ աշխատակցին 25 օրվա համար տրամադրված՝ օրական 10 hAMD օրապահիկի գումարներ, վերջինիս ամսական աշխատավարձը կազմել է 180 hAMD,

3.2. 19,350 hAMD հաշվապահական հաշվառմամբ հաշվարկված մաշվածության ծախսը, որի հարկային հաշվառմամբ ծախսը կազմել է 25,350 hAMD

3.3. 15,750 hAMD քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում օտարերկրացի քաղաքացիներից ստացված ծառայություններ,

3.4. 2,450 hAMD աշխատակիցների համար հաշվարկված չօգտագործված արձակուրդի պահուստ,

3.5. առհաշիվ անձանց կողմից ՀԴՄ կտրոններով կատարված 3,600 hAMD ձեռքբերումներ, որի 2/3 մաս կազմող ՀԴՄ կտրոնների վրա առկա չի եղել Ընկերության ՀՎՀՀ-ն,

3.6. 4,320 hAMD որպես օգնություն աշխատակիցներին տրամադրված դրամական միջոցներ,

3.7. 3,630 hAMD անհատույց ստացված նյութերի 1/3 արժեքը,

3.8. 2,200 hAMD միկրոձեռնարկատիրոջից անհատույց օգտագործման վերցված հողամասի գծով կատարված ծախսերը,

3.9. Սույն կետի ենթակետերում նշված տեղեկատվության հիման վրա համախառն եկամտից ծախսերի նվազեցման համար ՀՕ-ով սահմանված սահմանաչափերը գերազանցող մասերից հաշվարկված հարկերը:

4. Հաշվետու տարում բազմաբնակարան շենքի կառուցումն ավարտվել է 30/06/2025թ. -ին, իսկ վաճառված բնակարաններին վերագրված ինքնարժեքում մասնավորապես ներառվել են.

4.1. ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից իրականացված հեղինակային և տեխնիկական վերահսկողության արժեքից 830 hAMD, որից, համաձայն պայմանագրի, պահվել է 20% ոչ ռեզիդենտի

շահութահարկ,

4.2. սույն խնդրի 2.1-րդ կետում նշված տեղեկատվության հիման վրա ՀՕ-ով սահմանված ԱԱՀ հարկման բազայի որոշման առանձնահատկություններից ելնելով լրացուցիչ հաշվարկված ԱԱՀ գումարներ,

4.3. սույն խնդրի 2.2-րդ կետում նշված, վաճառված բնակարանի ինքնարժեքը կազմել է 34,580 hAMD:

5. Բեռնատարի հարկային առումով հաշվեկշռային արժեքը կազմել է 3,000 hAMD:

6. Վարչական ծախսերը մասնավորապես ներառում են.

6.1. Կառավարության սահմանած՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակների մասով շրջանառության հարկ վճարողից 11,350 hAMD համակարգչային ցանցի սպասարկման ծախսեր,

6.2. հաշվետու տարում հիմնական միջոցի վրա կատարվել է 150 hAMD-ի նորոգում: Այդ հիմնական միջոցի հարկային հաշվառման առումով սկզբնական արժեքը կազմել է 3,240 hAMD, իսկ հաշվետու տարվա սկզբի դրությամբ հաշվեկշռային արժեքը 2,850 hAMD,

7. Իրացման և մարկետինգային ծախսերը ներառում են մասնավորապես

7.1. քաղաքացիական պայմանագրով ՀՀ քաղաքացուն հաշվարկված 1,850 hAMD ծառայության վճար, ով հաշվետու տարվա ընթացքում ունեցել է հաշվանդամի կարգավիճակ,

7.2. 11,850 hAMD գովազդային ծախսեր,

7.3. 3,420 hAMD աշխատակիցների վերապատրաստման ծախսեր:

8. Սույն խնդրի 4-րդ կետում նշված՝ բազմաբնակարան շենքի բնակարանների ինքնարժեքում ներառված է ստացված վարկերի գծով հաշվարկված 5,860 hAMD տոկոսը, իսկ մնացած 4,560 hAMD տոկոսը նվազեցվել է համախառն եկամտից:

9. Հաշվետու տարվա համար վճարման ենթակա շահութահարկի կանխավճարը կազմել է 22,350 hAMD, որից Ընկերությունը վճարել է 15,450 hAMD:

Շահութահարկի հաշվարկը Ընկերությունը ներկայացրել է 30/03/2026թ. -ին:

Ընկերության 2026թ. -ի 1-ին եռամսյակի ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների գումարը կազմել է 240,500 hAMD:

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- Եթե ուղղակի նշում չկա, ապա համարել, որ նվազեցումների (ծախսերի, կորուստների, այլ նվազեցումների) փաստաթղթերով հիմնավորվածության պահանջը հարկային հաշվառման մասով բավարարված է:
- Հարկային հաշվառման մասով հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները հաշվարկելու համար Ընկերությունը կիրառում է ՀՀ Հարկային օրենսգրքով թույլատրելի ամորտիզացիոն բոլոր հնարավոր նվազագույն ժամկետներ ընդունելու հնարավորությունը՝ եթե այլ բան ասված չէ խնդրում:

Պահանջվում է վերը նշված տվյալների հիման վրա hAMD-ով հաշվարկել.

- ***հաշվետու տարվա հարկվող շահույթը (վնասը),***
- ***շահութահարկի գումարը,***
- ***պետական բյուջե վճարման (վերադարձման) ենթակա շահութահարկի գումարը***
- ***հաշվետու տարվան հաջորդող տարվա 2-րդ եռամսյակում վճարվելիք շահութահարկի կանխավճարի գումարը:***

/30 միավոր/

Խնդիր 2. Ավելացված արժեքի հարկի վերաբերյալ

«Բետա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է ԱԱՀ վճարող շինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն: ԱԱՀ-ի հաշվարկման նպատակով՝ Ընկերությունը, ըստ գործունեության տեսակների, հարկման օբյեկտների կամ հարկման բազաների կամ հարկի գումարների կամ եկամուտների կամ դրանց ստացման հետ կապված՝ Օրենսգրքով սահմանված նվազեցումների կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումը իրականացնում է առանձնացված եղանակով, եթե առանձնացված հաշվառում վարելը հնարավոր է: Ընկերությունը 2025թ.-ի դեկտեմբեր ամսին (այսուհետ՝ հաշվետու ամիս) իրականացրել է հետևյալ գործարքները.

1. Հաշվետու ամսում պատվիրատուներին հետ ստորագրված կատարողականների հիման վրա դուրս է գրել 158,690 hAMD (առանց ԱԱՀ) հարկային հաշիվներ: Շինարարական աշխատանքները ավարտված են, սակայն առկա են պատվիրատուներին հետ չստորագրված կատարողականներ՝ 4,330 hAMD (առանց ԱԱՀ) արժեքով:
2. Սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասից կամովին հրաժարվելով՝ 15,270 hAMD արժեքով օտարել է այն համայնքին: Ընկերությունը հողամասը ձեռք է բերել 9,810 hAMD (ներառյալ ԱԱՀ):
3. Կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացրել է 25,740 hAMD արժեքի շինարարական աշխատանք: Կատարված աշխատանքին իրականացմանը վերագրվող ձեռքբերումներին (այդ թվում՝ հաշվետու ամսում կատարված) վերաբերող հաշվանցված ԱԱՀ-ն կազմում է 3,840 hAMD:
4. Ընկերությանը պատկանող բեռնատարով այլ կազմակերպությանը մատուցել է բեռների՝ ՀՀ տարածքից դեպի Իրան փոխադրման տրանսպորտային ծառայություն՝ 2,420 hAMD արժեքով: Ծառայության մատուցմանը վերագրվող ձեռքբերումներին (այդ թվում՝ հաշվետու ամսում կատարված) վերագրվող հաշվանցված ԱԱՀ-ն կազմում է 340 hAMD:
5. 59,120 hAMD արժեքի չափով ոչ ռեզիդենտ կազմակերպությանը դուրս է գրել հաշիվ՝ ՀՀ տարածքից դուրս գտնվող նրան պատկանող անշարժ գույքի նորոգման համար: Ծառայության մատուցմանը վերագրվող ձեռքբերումներին (այդ թվում՝ հաշվետու ամսում կատարված) վերաբերող հաշվանցված ԱԱՀ-ն կազմում է 4,370 hAMD:
6. Ոչ ռեզիդենտ կազմակերպությանը ինժեներական աշխատանքների կատարման դիմաց դուրս է գրել 3,630 hAMD արժեքի չափով հաշիվ: Ծառայության մատուցմանը վերագրվող ձեռքբերումներին (այդ թվում՝ հաշվետու ամսում կատարված) վերաբերող հաշվանցված ԱԱՀ-ն կազմում է 470 hAMD ԱԱՀ:
7. ՀՀ-ում գտնվող Ռուսաստանի Դաշնության դեսպանատան համար իրականացրել շինարարական աշխատանք 85,140 hAMD արժեքով: Կատարված աշխատանքի իրականացմանը վերագրվող ձեռքբերումներին (այդ թվում՝ հաշվետու ամսում կատարված) վերաբերող հաշվանցված ԱԱՀ-ն կազմում է 10,240 hAMD: Աշխատանքի իրականացման համար ՀՀ տարածք է ներմուծել 3,820 hAMD-ով մաքսային արժեքով մշակութային արժեքներ:
8. ՀՀ տարածքում կառուցվելիք անշարժ գույքի նախագծման համար ոչ ռեզիդենտ կազմակերպությունից 17/12/25թ.-ին ստացել է 3,120 USD արժեքով հաշիվ: Գործարքի մասով 07/01/26թ.-ին դուրս է գրել հաշվարկային փաստաթուղթ:
9. Անշարժ գույքի հետ գործարքներ իրականացնող ոչ ռեզիդենտ գործակալից արտերկրում անշարժ գույքի փնտրման համար 25/12/25թ.-ին ստացել է 1,620 USD արժեքով հաշիվ: Գործարքի մասով հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրվել:
10. 25/12/25թ.-ին (սահմանը հատելու օր) ԵՏՄ անդամ հանդիսացող երկրի ոչ ռեզիդենտ մատակարար կազմակերպությունից ներմուծել է 24,850 USD գումարի չափով ԱԱՀ-ով հարկվող նյութեր: 29/12/25թ.-ին 3-րդ երկրի ոչ ռեզիդենտից ստացել է տվյալ նյութերի տրանսպորտային

բեռնափոխադրման 1,730 USD-ի հաշիվ, որից 230 USD արժեքը առանձնացվել է որպես ՀՀ տարածքում բեռնափոխադրման արժեք: Ներմուծման ժամանակ հաշվարկված ԱԱՀ-ն վճարվել է 05/01/26թ. -ին:

11. Մատակարար ոչ ռեզիդենտ կազմակերպությունից 26/12/25թ. -ին ներմուծված և «Բաց թողնում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով մաքսագերծված ԱԱՀ-ով հարկվող նյութերի համար ստացել է 18,820 USD արժեքով հաշիվ, որում ներառված է մինչև ՀՀ սահման բեռնափոխադրման 650 USD արժեքը: 30/12/25թ. -ին ԵՏՄ անդամ հանդիսացող երկրի ոչ ռեզիդենտից ստացել է տվյալ նյութերի ՀՀ սահմանից մինչև Ընկերության պահեստ տրանսպորտային բեռնափոխադրման 310 USD արժեքը, ինչի համար էլ Ընկերությունը 07/01/26թ. -ին դուրս է գրել հաշվարկային փաստաթուղթ: Ներմուծման ժամանակ հաշվարկված ԱԱՀ-ն վճարվել է 06/01/26թ. -ին:
12. Ստացված հաշիվ վավերագրերի և հարկային հաշիվների առանց ԱԱՀ հանրագումարը կազմել է 268,420 hAMD, իսկ ԱԱՀ-ն՝ 37,860 hAMD: Ստացված բոլոր հաշվարկային փաստաթղթերը Ընկերությունը էլեկտրոնային եղանակով ստորագրել է 19/01/26թ. -ին:
13. 12/01/26թ. -ին էլեկտրոնային եղանակով ստորագրել է հաշվետու ամսվա մատակարարման ամսաթվով մատակարարներից ստացված 2,360 hAMD (ներառյալ ԱԱՀ) ձեռքբերումների ավելացմանը վերաբերող ճշգրտող հարկային հաշիվներ:
14. 2025թ. -ին ԱԱՀ-ով ձեռք բերված նյութերի գծով որակական կորուստը կազմել է 56,730 hAMD: 2025թ. -ի շահութահարկի հաշվարկով համախառն եկամուտը կազմել է 3,470,630 hAMD: Հաշվետու ամսվան նախորդ ամիսներին նյութերի գծով որակական կորուստներին վերագրվող և ԱԱՀ-ի հաշվանցվող գումարներից արդեն իսկ պակասեցվել է 2,780 hAMD ԱԱՀ:
15. Ընկերության ԱԱՀ-ի գծով պարտավորությունը բյուջեի հանդեպ հաշվետու ամսվա ԱԱՀ-ի հաշվարկը ներկայացնելու օրվա դրությամբ կազմել է 1,860 hAMD:

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- ՀՀ ԿԲ հրապարակած՝ արժուրային շուկաներում ձևավորված 1 USD միջին փոխարժեքներն են

Ամսաթիվ	ՀՀ դրամ
16/12/25	381.7
17/12/25	381.6

Ամսաթիվ	ՀՀ դրամ
24/12/25	381.4
25/12/25	381.6

Ամսաթիվ	ՀՀ դրամ
26/12/25	381.5
06/01/26	381.6

Ամսաթիվ	ՀՀ դրամ
07/01/26	381.8
08/01/26	381.3

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- Եթե ուղղակի նշում չկա, ապա բոլոր դուրս գրված և ստացված հարկային հաշիվները հանդիսացել են օրենսգրքով սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվներ, և ԱԱՀ հաշվանցման իրավունքը օրենսգրքով սահմանված կարգով համարվել է բավարարված:

Պահանջվում է վերոնշյալ գործարքների հիման վրա hAMD-ով հաշվել.

- հաշվետու ամսվա բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը (կամ բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը),
- լրացնել այդ նույն հաշվետու ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը:

Հաշվարկում պահանջվող Օրենսգրքի հոդվածին, մասին, կետին հղում կատարելու դաշտերում նշել գործարքների կետերը (հաշվարկի ձևը կցվում է):

/25 միավոր/

Խնդիր 3. Եկամտային հարկ

Հարկման ընդհանուր համակարգում գործող «Գամմա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 2026 թվականի փետրվար ամսին (այսուհետ՝ հաշվետու ամիս) իրականացրել է հետևյալ գործարքները.

1. սույն աղյուսակի տեղեկատվության համաձայն հաշվարկել է աշխատակիցների աշխատավարձ՝

Կ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն	Մոցիալական վճար	Առողջության համընդհանուր ապահովագրություն	Պայմանագրային աշխատավարձ	Զուտ աշխատավարձ AMD
1	Մամիկոնյան Արսեն	Տնօրեն	Վճարող է	Ենթակա է	1,560,000	
2	Ավետիսյան Կարինե	Հաշվապահ	Վճարող չէ			450,000
3	Պետրոսյան Կարեն	Դիզայներ	Վճարող է	Ենթակա է		850,000
4	Վարդանյան Հայկ	Մոդելավորող	Վճարող է		280,000	

Հայտնի է, որ Ավետիսյան Կարինեն 67 տարեկան է, իսկ նախորդ ամսում աշխատանքի ընդունված Վարդանյան Հայկի հունվար ամսվա պայմանագրային աշխատավարձը կազմել է 225,600 AMD:

2. աշխատակիցներին լրացուցիչ հաշվարկվել և (կամ) վճարվել են հետևյալ եկամուտները.

- 2.1. Մամիկոնյան Արսենին 05/02/2025թ. -ին վճարվել է ՀՀ գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերի գծով հաշվեգրված 960,000 AMD տոկոս,
- 2.2. Ուսուցման կենտրոնին փոխանցել է 420,000 AMD, որպես Ավետիսյան Կարինեի վերապատրաստման դասընթացի մասնակցության դիմաց:
- 2.3. ՀՀ օրենսդրության համաձայն Պետրոսյան Կարենին վճարվել է 670,000 AMD արձակման նպաստ:
- 2.4. Վարդանյան Հայկի դիմումի համաձայն նրա բանկային հաշիվ փոխանցվել է 360,000 AMD՝ որպես օգնություն՝ բնակարանի վերանորոգման համար:

3. Այլ ֆիզիկական անձանց հետ հաշվետու ամսում գործարքներ.

- 3.1. Ընկերությունը Մարտիրոսյան Վահեից ձեռք է բերել անշարժ գույք բաղկացած՝ 13,000,000 AMD շինությունից և 1,200,000 AMD հողամասից: Հաշվետու ամսին Մարտիրոսյան Վահեին վճարվել է անշարժ գույքի ամբողջ արժեքը:
- 3.2. Սարգսյանի վերանորոգման համար ՀՀ քաղաքացի, սոցիալական վճար կատարող Բաղդասարյան Լևոնի ծառայության վճարը կազմել է 300,000 AMD՝ համաձայն կատարողական ակտի: Բաղդասարյան Լևոնին հաշվետու ամսում փոխանցվել է ծառայության վճարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և վճարները պահելուց հետո:
- 3.3. Նիկողոսյան Մհերից վերցված փոխառության դիմաց նախորդ ամսում հաշվարկված 180,000 AMD տոկոսը վճարվել է հաշվետու ամսում:
- 3.4. Տնօրեն Մամիկոնյան Արսենի գործուղման հետ չկապված կեցության համար Ընկերությունը ՀՀ քաղաքացի Մինասյան Նարինեի բանկային հաշվին փոխանցել է նրանից վարձակալված բնակարանի նախորդ ամսվա վարձավճարը՝ 300,000 AMD: Ընկերության և Մամիկոնյան Արսենի աշխատանքային պայմանագրով նախատեսված է, որ աշխատավարձը ներառում է այդ ծախսը:

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- Խնդրի պահանջների մեջ եկամտի չվճարված լինելու պայմանի բացակայության դեպքում համարել, որ հաշվարկված եկամուտն ամբողջությամբ վճարված է: Պահանջվում է հաշվարկել.
- ֆիզիկական անձանց եկամտային հարկով հարկման բազաները, ինչպես նաև սույն խնդրի 1-ին կետում գուտ աշխատավարձ չունեցող աշխատակիցների վճարման ենթակա աշխատավարձի չափերը AMD-ով,
- Հաշվետու ամսվա բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի, սոցիալական վճարի, առողջության համընդհանուր ապահովագրավճարի և դրոշմանիշային վճարի գումարները AMD-ով:

/15 միավոր/

Խնդիր 4. Ոչ ռեզիդենտի շահութահարկի վերաբերյալ

ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (այսուհետ՝ Ընկերություն) կատարել է հետևյալ գործարքները.

1. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունից ստացել է ապրանքի մատակարարման դիմաց կանխավճար 23,860 հAMD՝ համաձայն միմյանց միջև կնքված ապրանքների առքուվաճառքի պայմանագրի, ինչպես նաև 1,120 հAMD արժեքով հաշիվ՝ այդ ապրանքի բեռնափոխադրման համար, որից 120 հAMD-ը ՀՀ տարածքում կատարված բեռնափոխադրման դիմաց:
2. ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձից ստացել է ՌԴ-ում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից 8,710 հAMD վարձավճար:
3. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունից 2,220 հAMD արժեքով ձեռքբերված բաժնետոմսերը վաճառել ՀՀ ֆիզիկական անձի 3,850 հAMD արժեքով:
4. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը ՌԴ տարածքում մատուցել է 5,960 հAMD փորձագիտական ծառայություն: ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը Ընկերությանը է փոխանցել նշված պարտքին համարժեք տրանսպորտային միջոց:
5. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը Ընկերությանը ներել է ապրանքի մատակարարման համար Ընկերությանը փոխանցված 2,450 հAMD կանխավճարի գումարը:
6. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը տրամադրած 13,890 հAMD փոխառության և հաշվարկված 830 հAMD տոկոսի պարտավորությունը փոխանցվել ՀՀ ֆիզիկական անձի:
7. ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույքը վարձակալության է հանձնել ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձի և ստացել է վարձավճարի կանխավճար 5,640 հAMD:
8. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը տրամադրած համակարգչային ծրագրի սպասարկման դիմաց ստացել է 2,610 հAMD :
9. ՀՀ ռեզիդենտ կազմակերպության տարեկան ժողովի որոշմամբ հայտարարվել է 17,800 հAMD շահաբաժին, ինչի պիտի վճարվի Ընկերությանը հաջորդ տարի:
10. ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձին ՀՀ տարածքում մատուցել է միջնորդական ծառայություն 3,800 հAMD արժեքով

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- ՀՀ և Ընկերության ռեզիդենտության պետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիր առկա չէ:

Պահանջվում է առանձին նշել գործարքներից առաջացող ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարները հAMD-ով, որոնք հաշվարկվում և պահվում են՝

- ***հարկային գործակալների կողմից,***
- ***Ընկերության կողմից:***

/15 միավոր/